



**Մարզադահլիճների և Ֆիթնես Հաստատությունների Վերաբացման Արձանագրություն. Հավելված L  
Ուժի մեջ է Հիվանդանոցի, 2021թ.-ի Մայիսի 06-ի առավոտյան ժամը 12:01-ից**

**Վերջին թարմացումներ.** (փոփոխությունները նշված են դեղինով)  
**5/5/2021.** Ներքին զբաղեցվածությունը կարող է ավելացվել մինչև առավելագույն զբաղեցվածության 50%-ը՝ հիմնվելով կիրառելի շինության կամ հրդեհային օրենսգրքի վրա: Փակ տարածքում տաք ջակուզիները, սաունաները և շոգեբաղնիքները կարող են վերաբացվել օգտագործման համար:

COVID-19 դեպքերի մակարդակը, հոսպիտալացումը և մահվան դեպքերը **որոշակիորեն նվազել են և հաստատուն են թվում**, սակայն COVID-19-ը շարունակում է մեծ վտանգ առաջացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և ձեռնարկություններից պահանջում է նախագուշակյան միջոցներ ձեռնարկել և փոփոխել գործառնություններն ու գործողությունները՝ տարածման վտանգը նվազեցնելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի՝ Անվտանգ Տնտեսության Նահանգային Ծրագրի «**Ղեղին** Կարգ» մուտք գործելու պատճառով այս արձանագրությունը թարմացվել է՝ վերացնելու որոշ տեղական գործունեության հատուկ սահմանափակումներ: Մարզադահլիճները և ֆիթնեսի հաստատությունները պետք է զգուշորեն շարունակեն և պահպանեն սույն արձանագրության պահանջները՝ իրենց բիզնեսում COVID-19-ի հավանական տարածումը նվազեցնելու համար:

Ստորև բերվող պահանջները նախատեսված են մարզադահլիճների և ֆիթնես հաստատությունների, յոգայի և պարի ստուդիաների, 1:1 ֆիթնես մարզումների և պատեր մագցելու (ընդհանուր կոչվում են «Մարզադահլիճներ և Ֆիթնես Հաստատություններ») համար: Ի հավելումն Նահանգապետի կողմից այս հատուկ բիզնեսներին ներկայացվող պահանջներին, այս տեսակի բիզնեսները պետք է համապատասխանեն մարզադահլիճների և ֆիթնես հաստատությունների համար նախատեսված Վերաբացման Արձանագրության ներկայացված պահանջներին:

Մարզադահլիճները և ֆիթնես հաստատությունները կարող են վերաբացվել սահմանափակ զբաղվածությամբ փակ տարածքում գործողությունների համար: Մարզադահլիճներում և ֆիթնես հաստատություններում ներսում գործառնությունները սահմանափակվում են **50%** զբաղվածությամբ՝ հիմնվելով գործող Շինության կամ Հրդեհային Օրենսգրքի վրա և կարող են շարունակել բաց մնալ հանրության համար բացօթյա գործողությունների համար: Քանի որ բացօթյա ֆիթնես գործառնությունները փոխանցման ավելի ցածր վտանգ ունեն, համեմատած ներսում կատարվող գործառնությունների հետ, մարզադահլիճներն ու ֆիթնես հաստատությունները խրախուսվում են շարունակել առաջնահերթություն համարել բացօթյա ծառայությունները: Ե՛վ փակ տարածքում, և՛ բացօթյա գործառնությունների դեպքում՝ բոլոր աշխատակիցներն ու հաճախորդները ամբողջ ընթացքում պետք է համապատասխան **դիմակ** կրեն՝ բացառությամբ լողալիս: Դիմակների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչության (LACDPH) COVID-19 Դիմակների կայքէջը՝ <http://ph.lacounty.gov/masks>:

**Փակ տարածքում և բացօթյա տաք ջակուզիները, սաունաները և շոգեբաղնիքները կարող են վերաբացվել օգտագործման համար:** Փակ տարածքում և բացօթյա ջակուզիները կարող են բացվել միայն ընտանեկան խմբերի կողմից օգտագործման համար կամ որտեղ 6 ոտնաչափ հեռավորություն կարող է պահպանվել նույն տնային տնտեսության անդամ չհանդիսացողների միջև: Սաունաները և շոգեբաղնիքները պետք է սահմանափակվեն **50%** զբաղեցվածությամբ: Բացօթյա և փակ լողավազանները կարող են բաց լինել

կանոնավոր օգտագործման համար: Բոլոր լողավազանները պետք է համապատասխանեն LACDPH-ի [Հանրային Լողավազանների Արձանագրություններին](#):

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիությունից, ուստի պարբերաբար ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումների համար:

Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Աշխատավայրի կանոնադրությունն ու գործելակերպը աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Խիստ կարևոր ծառայությունների անաչառ հասանելիության միջոցառումներ

Եթե ձեր հաստատությունը մշակում է վերաբացման ցանկացած արձանագրություն, ապա անհրաժեշտ է անդրադառնալ վերոհիշյալ հինգ հիմնական ոլորտներին:

**Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:**

Բիզնեսի անունը.

---

Հաստատության հասցեն.

---

Առավելագույն այցելուների քանակը՝  
համաձայն Հրդեհային օրենսգրքի.

---

Հանրության համար բաց մոտավոր  
ընդհանուր քառակուսի ոտնաչափ  
տարածքը.

---

**A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՈՒՂԴՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈՒՈՐ ԿԵՏԵՐԸ ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Յուրաքանչյուր աշխատակից, ով կարող է իր աշխատանքային պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է աշխատել տնից:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և խրոնիկական հիվանդություններ ունեցող) հանձնարարվել է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է տնից կատարել և նրանք պետք է իրենց մտահոգությունների համար խորհրդակցեն իրենց բուժաշխատողի կամ մասնագիտական առողջապահական ծառայության հետ՝ աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ կայացնելու համար:
- Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվել են ընդլայնելու համար



աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունները:

- ❑ Այլընտրանքային, փոփոխվող կամ հերթափոխով ժամանակացույցեր են կիրառվում՝ ֆիզիկական հեռավորությունն առավելագույնի հասցնելու համար:
- ❑ Բոլոր աշխատակիցներին զգուշացվել է աշխատանքի չներկայանալ, եթե հիվանդ են կամ շփում են ունեցել COVID-19-ով վարակված որևէ անձի հետ: Աշխատակիցները հասկանում են, որ պետք է հետևեն Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցներին, եթե կիրառելի է: Աշխատանքից բացակայելու կանոնները վերանայվել և փոփոխվել են, որպեսզի աշխատողները չտուժեն, եթե հիվանդության պատճառով տանն են մնացել:
- ❑ Մուտքի ստուգումները պետք է իրականացվեն նախքան աշխատակիցների, վաճառողների, առաքման անձնակազմի կամ տեղում ծառայություններ մատուցող ցանկացած անձի կողմից աշխատավայր մուտք գործելը՝ համաձայն LACDPH-ի [Մուտքի Ստուգումների ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրահանգներին: Նշված ստուգումները կարող են կատարվել հեռակա կարգով կամ անձնապես՝ աշխատակիցների ժամանման պահին: Հնարավորության դեպքում պետք է կատարվի ջերմաչափում:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը Թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 10 օրերի ընթացքում շփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է այդ օրը մուտք գործել աշխատավայր:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը Չի Թույլատրվում).
    - Եթե անձն ամբողջովին պատվաստված չէ<sup>1</sup> COVID-19-ի դեմ և վերջին 10 օրերի ընթացքում շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրահանգներին, նա չի կարող մուտք գործել կամ աշխատել հաստատության տարածքում և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine):
    - Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրահանգներին, նա չի կարող մուտք գործել կամ աշխատել հաստատության տարածքում և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ մեկուսանալու տանը: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidisolation](http://ph.lacounty.gov/covidisolation):
- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միգուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների կառավարական [ծրագրերի](#) օժանդակության և COVID19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները ըստ [2021թ.-ի COVID-19 Հիվանդության Հետևանքով Լրացուցիչ Վճարովի Արձակուրդի Օրենքի](#):
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատակիցների թեստի արդյունքը դրական է, կամ եթե նրանք

<sup>1</sup> Մարդիկ COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված են համարվում երկփուլ պատվաստանյութի (օր.՝ Pfizer-BioNTech կամ Moderna) երկրորդ դեղաչափն ընդունելուց երկու (2) կամ ավելի շաբաթ անց, կամ միափուլ պատվաստանյութն (օր.՝ Johnson and Johnson [J&J]/Janssen) ընդունելուց երկու (2) կամ ավելի շաբաթ անց:



ունեն COVID-19-ի ախտանիշների նման ախտանիշներ, ապա գործատուն պետք է իր գործող ծրագրի համապատասխան պահանջի, որպեսզի «հիվանդ(ներ)ը [ինքնամեկուսանան տանը](#), ինչպես նաև պետք է պահանջի, որ բոլոր աշխատակիցները, որոնք աշխատավայրում շփվել են այդ «հիվանդի» հետ, անմիջապես [ինքնակարնտին պահպանեն](#): Գործատուի ծրագիրը պետք է ներառի արձանագրություն, որով կարանտինի մեջ գտնվող բոլոր աշխատակիցները թեստավորվեն կամ նրանց համար հասանելի կլինի COVID-19-ի թեստավորումը, պարզելու համար թե արդյոք աշխատավայրում եղել են շփման լրացուցիչ դեպքեր, որի հետևանքով հնարավոր է պահանջվեն COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին Արձագանքելու վերաբերյալ](#):

- ❑ Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակման դեպքեր բացահայտելու դեպքում գործատուն պետք է զեկուցի այս խմբի վերաբերյալ Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությանը՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով, կամ առցանց [www.redcap.link/covidreport](http://www.redcap.link/covidreport): Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվում, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետագոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը: Հանրային Առողջապահության Վարչությանը անհրաժեշտ է լինելու հաստատության անհապաղ համագործակցությունը՝ որոշելու համար արդյոք վարակման մի խումբ դեպքերը հանդիսանում են COVID-19-ի բռնկում:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է [համապատասխան դիմակ](#), որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս LAC DPH COVID-19-ի Դիմակների կայքէջը <http://ph.lacounty.gov/masks>: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, որոնք իրենց բժշկական մատակարարի կողմից հանձնարարվել է չկրել դիմակ, պետք է կրեն ներքնի եզրին շղարշ ունեցող դեմքի վահան, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներով դիմակները չպետք է օգտագործվեն: Դիմակները, որոնք սահմանափակում են օդի հոսքը ծանր ճնշման տակ (օրինակ՝ N-95 դիմակները), խորհուրդ չեն տրվում վարժությունների համար:
- ❑ Բոլոր աշխատակիցները պետք է դիմակ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը կատարվել է աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողների համար, փոխարինվում է:
- ❑ Դիմակների հետևողական և ճշգրիտ կրելը ապահովելու համար աշխատակիցներին չի խրախուսվում ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջման ժամերին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր է ապահովում:



- ❑ Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
  - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը, և
  - Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
  - Սեղանները տեղադրել առնվազն ութ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել՝ զբաղվածությունը նվազեցնելու համար, հատակի վրա գծանշումներ դնել՝ հեռավորությունն ապահովելու համար, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- ❑ Այն աշխատողները, որոնք դիմակ չկրող հաճախորդից կամ մյուս աշխատակիցներից պետք է մշտապես գտնվեն 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում, դիմակին գուգահեռ պետք է կրեն երկրորդական պաշտպանիչ միջոց (օր.՝ դեմքի վահան կամ անվտանգության ակնոցներ (goggles)): Բոլոր աշխատակիցները պետք է նվազեցնեն հյուրերի հետ 6 ոտնաչափ հեռավորության սահմաններում անցկացրած ժամանակը: Դեմքի վահանները կամընտրական են այն աշխատողների համար, ովքեր COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց են ներկայացնում իրենց գործատուին. դիմակ կրելը դեռևս պահանջվում է: Ամբողջովին պատվաստված աշխատողների համար, ովքեր COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույց են ներկայացրել և նախընտրում են դեմքի վահան չկրել, գործատուն պետք է ստեղծի և գրավոր զեկույց վարի, որը կփաստագրի, որ այս աշխատողներից յուրաքանչյուրը իրենց ներկայացրել է ամբողջովին պատվաստված լինելու մասին ընդունելի ապացույց: Գործատուից չի պահանջվում պահել ներկայացված ամբողջովին պատվաստված լինելու մասին ապացույցի կրկնօրինակը:
  - Մարդիկ COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված են համարվում երկփուլ պատվաստանյութի (Pfizer-BioNTech կամ Moderna) երկրորդ դեղաչափը ընդունելուց  $\geq 2$  շաբաթ անց, կամ միափուլ պատվաստանյութն ընդունելուց  $\geq 2$  շաբաթ անց (Johnson and Johnson [J&J]/Janssen)
  - Աշխատողների համար որպես COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստված լինելու մասին գործատուին ներկայացնելու ապացույց ընդունելի է համարվում հետևյալը. պատվաստման քարտ (որը ներառում է պատվաստված անձի անունը, տրված պատվաստանյութի տեսակը և վերջին չափաբաժինը ստանալու ամսաթիվը) ԿԱՄ պատվաստման քարտի նկարը՝ որպես առանձին ապացույց, ԿԱՄ այցելուի պատվաստման քարտի նկարը՝ պահպանված հեռախոսի կամ էլեկտրական սարքավորման վրա, ԿԱՄ ամբողջովին պատվաստված լինելու մասին փաստաթուղթ առողջապահական մատակարարի կողմից (որը ներառում է պատվաստված անձի անունը և հաստատում է, որ անձը ամբողջովին պատվաստված է COVID-19-ի դեմ):
- ❑ Աշխատակիցներին հանձնարարվում է ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները:
- ❑ Բոլոր աշխատակալանները միմյանցից բաժանված են առնվազն 6 ոտնաչափով:
- ❑ Ընդմիջման սենյակները, պետքարանները և այլ ընդհանուր տարածքները օրական առնվազն մեկ

անգամ ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.

- Ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
- Պետքարաններ \_\_\_\_\_
- Այլ վայրեր \_\_\_\_\_

Ապահովեք, որ հաստատությունում ժամանակավոր կամ պայմանագրային աշխատողները պատշաճ կերպով պատրաստ լինեն COVID-19 կանխարգելման կանոնադրությանը, և ունենան անհրաժեշտ պարագաներ և Անձնական Պաշտպանողական Սարքավորումներ: Նախապես քննարկեք այս պարտականությունները ժամանակավոր և/կամ պայմանագրային աշխատողներ մատակարարող կազմակերպությունների հետ:

Դիմակները պահանջվում են, երբ աշխատակիցները միմիանց մոտիկ են աշխատում: Աշխատողները պետք է ունենան դիմակներ և կրեն դրանք ֆիթնես հաստատությունում, գրասենյակներում կամ ընկերությանը պատկանող ավտոմեքենաներում, երբ երթնեկում են ուրիշների հետ: **Դիմակները** հատկապես կարևոր են, եթե աշխատանքի ժամանակ հնարավոր չէ ֆիզիկական հեռավորություն պահելը (օր` երբ անձնական մարզիչները և աշխատակազմը օգնում է անդամներին մարզանքների ժամանակ): Դիմակները չի կարելի փոխանակել: Գործատուները պարտավոր են դիմակներ տրամադրել բոլոր աշխատակիցներին:

Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում.

COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.

Աշխատակիցներին թույլատրվում է հաճախակի ընդմիջումներ՝ ձեռքերը լվանալու համար:

Յուրաքանչյուր աշխատակցի բաժանվել է այս արձանագրության պատճենը:

Յուրաքանչյուր աշխատողին հատկացվում է իր սեփական գործիքները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Իրերի համատեղ օգտագործումը նվազագույնի է հասցված կամ վերացված է:

Այս ստուգաթերթիկում նկարագրված բոլոր կանոնադրությունները, բացի նրանցից, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, վերաբերում են նաև առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են գտնվել տվյալ տարածքում որպես երրորդ կողմ:

Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրել այլ միջոցառումներ.

**B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Ներքին գործողություններ: Մարզադահլիճի և ֆիթնես հաստատության գործողությունները, որոնք առաջարկվում են ներսում, սահմանափակվում են հաստատության ներսում առավելագույն զբաղվածության **50%-ով՝ հիմնվելով գործող Շինության կամ Հրդեհային Օրենսգրքի վրա: Զբաղեցվածության այս սահմանը վերաբերում է մարզադահլիճի կամ ֆիթնես հաստատության անհատական սենյակներին, ներառյալ սահանագույցները, լոգարանները, սաունաները, շոգեբաղնիքները և հանդերձարանները:**

- Հաստատությունում հաճախորդների առավելագույն քանակը սահմանափակվում է.



- ❑ Բացօթյա գործողություններ: Բացօթյա տարածքների զբաղվածությունը սահմանափակված է այնպիսի մակարդակով, որը բոլոր աշխատողներին և հաճախորդներին հնարավորություն է տալիս մշտապես պահպանել մյուսներից առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
- ❑ Արտաքին կառույցներ և տարածություն: Բացօթյա գործողությունները կարող են իրականացվել հովանու կամ արևի այլ պատասպարանի ներքո, պայմանով, որ հովանու կամ արևի պատասպարանի կողմերը փակ չեն, և տարածության մեջ առկա է բացօթյա օդի բավարար շարժ: Բացօթյա գործողությունների համար օգտագործվող ցանկացած բացօթյա տարածք կամ ժամանակավոր կառույց պետք է համապատասխանի Նահանգային բացօթյա կառույցների չափորոշիչներին, ինչպես նշված է Կալիֆոռնիայի Առողջապահության Վարչության [Use of Temporary Structures for Outdoor Business Operations](#). պարտադիր ուղեցույցում:
- ❑ Բացօթյա կառույցները, որոնք չեն համապատասխանում Նահանգի բացօթյա կառույցների չափանիշներին, դասակարգվում են որպես փակ տարածքներ, և դրանց մեջ գտնվող ցանկացած հաճախորդ կհաշվարկվի և կներառվի որպես հաստատության 50% փակ զբաղվածության ընդհանուր սահմանի մաս:
- ❑ Աշխատակազմը պետք է խստորեն և շարունակաբար հաշվարկի հաճախորդների մուտքն ու ելքը մարզադահլիճի/ֆիթնես հաստատության փակ տարածքների բոլոր մուտքերում՝ զբաղվածությանը հետևելու և կարողությունների սահմանների և ֆիզիկական հեռավորության պահանջների համապատասխանությունն ապահովելու համար: Մարզադահլիճները/ֆիթնես հաստատությունները կարող են որոշել սահմանափակել մուտքերի քանակը, որոնք հասարակության համար բաց են սովորական աշխատանքային ժամերին՝ ավելի հեշտ հետևելու համար: Մարզադահլիճները/ֆիթնես հաստատությունները, որոնք անբավարար կերպով են հաշվարկում, կամ չեն հաշվում կամ, կարծես, գերզբաղված են, կարող են, ըստ առողջապահության տեսուչի հայեցողության, ժամանակավորապես փակվել, մինչև այդ խնդիրների շտկումը՝ ըստ տեղում ստուգում իրականացնող առողջապահական տեսուչի որոշման:
- ❑ Խուսափեք հաստատության դրսում հաճախորդների հերթերի գոյացումից և ցանկալի է, որ անձնակազմից որևէ մեկը հետևի մարզասրահի/ֆիթնեսի հաստատության մուտքը՝ օգնելու պահպանել զբաղվածության սահմանը:
- ❑ Միայն այն հաճախորդները, որոնք իրականում մարզվում են, կարող են գտնվել մարզասրահի/ֆիթնեսի հաստատության տարածքում:
- ❑ Փակ կամ բացօթյա մարզասրահի/ֆիթնես հաստատության բոլոր աշխատակիցներն ու հաճախորդները պետք է մշտապես կրեն դիմակ, բացառությամբ լողի, սաունայի/շոգեբաղնիքի կամ ցնցուղի ժամանակ:
- ❑ Խմբային մարզումների դասերը, ինչպիսիք են՝ աերոբիկան, յոգան և պարը, պետք է որքան հնարավոր է իրականացվեն բացօթյա տարածքում և պետք է ձևափոխվեն՝ սահմանափակելու խմբի անդամների քանակը, որպեսզի հաճախորդների միջև պահպանվի առնվազն 6 ոտնաչափ հեռավորությունը:
  - Խմբային վարժության դասերը կարող են առաջարկվել միայն այն դեպքում, եթե հեռավորության պահանջները կարող են պահպանվել, և եթե բացակայում է անձանց միջև ֆիզիկական շփումը:
  - Աերոբիկայի բարձրակարգ դասերի համար, ինչպիսիք են աերոբիկան կամ մարզական տեխնիկան, օրինակ՝ էլիպսաձև, քայլքի կամ աստիճանների մեքենաները, դիտարկեք անհատներին կանգնեցնել և սարքավորումները տեղադրել միմյանցից առնվազն 8 ոտնաչափ հեռավորության վրա՝ 6 ոտնաչափի փոխարեն:
- ❑ Բացօթյա սպորտային դաշտերը կարող են օգտագործվել անհատական մարզումների կամ այնպիսի գործունեությունների համար, որոնց ընթացքում հնարավոր է պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն: Երբ մարդիկ սպասում են դաշտից օգտվելու համար, ապա յուրաքանչյուր մասնակցի համար հարկավոր



Է կիրառել դաշտից օգտվելու առավելագույն ժամանակահատված: Սպասող մասնակիցները պետք է ֆիզիկական հեռավորություն պահպանեն:

- Յոզայի դասերը, որոնք իրականացվում են 100°F-ից բարձր ջերմաստիճանի պայմաններում, պետք է դադարեցնել:
- Անհատական մարզիչների աշխատանքը թույլատրվում է, եթե նրանք հաճախորդից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն և դիմակ կրեն: Հաճախորդները պետք է դիմակ կրեն ցուցումունքներ ստանալու ընթացքում և պետք է միայն այնպիսի վարժություններ կատարեն, որոնց ընթացքում կարող են հանգիստ շնչել դիմակ կրելով, որը պետք է ամբողջ ընթացքում ծածկի նրանց քիթն ու բերանը:
- Սարքավորումները տեղադրված են առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, ավելի մեծ հեռավորության վրա վազքողիների և այլ բարձր ծանրաբեռնվածության աերոբիկ ֆիթնես սարքավորումների համար: Սարքավորումները կարելի է դասավորել «X» ձևով՝ ավելի մեծ հեռավորություն ապահովելու համար: Սարքավորումները, որոնք հնարավոր չէ տեղափոխել, անջատված են՝ համոզվելու համար, որ հաճախորդները կարող են առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն պահպանել մյուսներից: Կպչող ժապավենը կամ այլ կարգի նշումները կօգնեն հաճախորդներին 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել իրենց և շարքում կանգնած ցանկացած այլ մարդկանց միջև: Նշումը կսահմանի սկզբնակետը այն հաճախորդների համար, ովքեր հերթ են կանգնում, և՛ 6 ոտնաչափ հեռավորությամբ գծանիշները կլինեն շարքին հետագա միացող հաճախորդների համար:
- Բացօթյա ֆիթնես տարածքում կիրառեք միակողմանի քայլելու ճանապարհներ՝ տեսանելի նշաններով և ցուցանակներով:
- Աշխատակիցներին հանձնարարվել է պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն հաճախորդներից և միմյանցից մարգասրահի/ֆիթնես հաստատության բոլոր տարածքներում: Աշխատակիցները կարող են ակնթարթորեն մոտենալ, երբ դա անհրաժեշտ է վճարումներն ընդունելու, ապրանքներ կամ ծառայություններ մատուցելու կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- Թույլատրվում են **մերսման** ծառայությունները, և պետք է համապատասխանեն [Անհատական Խնամքի Օտոայություններ](#) հրապարակված արձանագրության համապատասխան բաժիններին:
- Զուգարանները, ցնցուղները և հանդերձարանները, որոնք գտնվում են հաստատության ներսում, բաց են հաճախորդների համար՝ սահմանափակ **50%** կարողությամբ (տեղավորելիությամբ):
- Հանդերձարաններում սպասող հաճախորդների միջև պատշաճ ֆիզիկական հեռավորության պահպանումը ապահովելու համար, անհրաժեշտ է տեղադրել ցուցատախտակներ և հատակին գծանշումներ կատարել:
- Ընդհանուր զուգարանները պետք է կանոնավոր կերպով մաքրվեն ամբողջ օրվա ընթացքում՝ EPA-ի կողմից գրանցված ախտահանիչների օգտագործմամբ: Հաճախակի հպման մակերեսները՝ ինչպիսիք են ծորակները, զուգարանները, դռների բռնակները և լույսերի անջատիչները, պետք է օրական առնվազն մեկ անգամ, բայց անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ, մաքրվեն և ախտահանվեն:
- Պետք է կազմել և փակցնել հաստատության զուգարանների մաքրման ժամանակացույց: Մաքրման և ախտահանման ժամանակ զուգարանները պետք է փակ լինեն:
- Դիտարկեք ստուգացուցակի կամ հաշվեքնության համակարգի օգտագործման տարբերակը, որպեսզի հետևեք՝ որքան հաճախ է մաքրում իրականացվում:
- Ապահովեք, որպեսզի սանիտարական հարմարությունները գործող (սարքին) վիճակում լինեն և շարունակաբար համալրվեն: Ըստ անհրաժեշտության տրամադրեք լրացուցիչ օձառ, թղթե սրբիչներ և ձեռքերի ախտահանիչ միջոցներ: Հնարավորության դեպքում տեղադրեք առանց հպման սարքեր՝ ներառյալ շարժմանը զգայուն սենսորային լվացարանների ծորակներ, օձառի, ախտահանիչների և թղթե



սրբիչների դիսպենսերներ:

- ❑ Հնարավորության դեպքում դիտարկեք բազմախցիկ զուգարանների դռների ձևափոխման տարբերակը, որոնք հնարավոր կլինի բացել առանց բռնակներին դիպչելու՝ բացելու սարքերի օգտագործմամբ կամ ձեռքով կառավարվող սենսորային բացման տարբերակով: Եթե դուր չի կարող բացվել առանց բռնակին կամ սենսորին դիպչելու, ապա դռների մոտ պետք է տեղադրվեն աղբամաններ, որպեսզի հնարավոր լինի հեշտությամբ նետել դուրը բացելու համար օգտագործված թղթե սրբիչները: Թափոնների համար նախատեսված տարաների (աղբամաններ) դիրքը և տեղակայումը չպետք է խոչընդոտեն ելքին, տարհանմանը, արտակարգ իրավիճակների սարքավորումներ տեղադրելու կամ ցանկացած այլ խելամիտ հարմարությունների կիրառմանը՝ համաձայն Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Մասին Օրենքի:
- ❑ Անհրաժեշտ է տրամադրել տեղեկություններ ձեռքերի պատշաճ կերպով լվացման մասին՝ ընդգրկելով նշանների տեղադրում զուգարաններում:
- ❑ Ցանկալի է, որ դադարեցնեք ոչ հիմնական գործունեությունները, ներառյալ՝ մանրածախ գործողությունները, երեխաների խնամքը և սննդի ծառայությունը: Եթե ֆիթնես հաստատությունը մատուցում է նման ծառայություններ, ապա պետք է դիտարկեն և հետևեն Երջանի Հանրային Առողջապահության կողմից հրատարակված կիրառելի արձանագրությունների պահանջներին:
- ❑ Մարզասրահի ներսում տեղակայված լողավազանները պետք է նաև համապատասխանեն Երջանի [Հանրային Լողավազանների Արձանագրություններին](#): Փակ տարածքների ջակուզիները, սաունաները և գոլորշու սենյակները պետք է շարունակվեն փակ մնալ:

**C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀԱՄԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- ❑ HVAC համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. առավելագույն հնարավորության չափով ավելացվել է օդափոխությունը: Արդյունավետ օդափոխությունը փոքր աերոզոլային փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է: Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքեր, արդիականացնել շինության օդային զտիչները, փոխարինելով դրանք հնարավոր ամենաբարձր արդյունավետության զտիչներով, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ՝ ավելացնելու համար դրսի օդի քանակը և օդափոխությունը գրասենյակներում ու այլ տարածքներում: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչության [Ներքին միջավայրում օդափոխության, ֆիլտրման և օդի որակի միջանկյալ ուղեցույցը](#):
  - Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխումը և ներսի օդի որակի այլ բարելավումները լրացնում և չեն փոխարինում պարտադիր պաշտպանություններին, ներառյալ դեմքի ծածկոցներ կրելուն (բացառությամբ բարձր վտանգի միջավայրերի, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), պահպանելով առնվազն վեց ոտնաչափ մարդկանց միջև հեռավորությանը, ձեռքերը հաճախակի լվանալուն և սահմանափակող գործողություններին, որոնք համախափում են տարբեր տնային տնտեսությունների մարդկանց:
- ❑ Բոլոր հաճախորդները պարտավոր են դիմակներ կրել, քանի դեռ նրանք գտնվում են մարզասրահում/ֆիթնես հաստատությունում: Միակ բացառությունն այն է, երբ հաճախորդները հնարավոր է լողավազանում լողան, **սաունայում/շոգեբաղնիքում կամ ցնցուղի տակ լինեն**: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկան և բարձր երեխաներին: Անհատները, որոնց իրենց բժշկական մատակարարը հանձնարարել է չկիրառել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ներքին եզրին շղարշով, որպեսզի համապատասխանեն Նահանգի հրահանգներին, եթե նրանց վիճակը դա թույլ է տալիս: Կզակին համապատասխան գրկող շղարշը նախընտրելի է: Միակողմանի փականներով



դիմակները չպետք է օգտագործվեն: Դիմակները պահանջվում են նույնիսկ ծանր վարժություններ կատարելիս, եթե հնարավոր է կրել:

- ❑ Հաճախորդներին պետք է հիշեցնել, որ իրենց ուժերը սահմանափակ են այնպիսի մակարդակի, որը հարմար է դիմակ կրելիս և դադարեցնեն վարժությունները կամ վարժություններից հաճախակի դադարներ վերցնեն, եթե սկսեն շնչառության հետ կապված որևէ դժվարություն ունենալ: Դիմակները պետք է փոխել, եթե դրանք թրջվեն, կպչեն մարդու դեմքին կամ խանգարեն շնչառությանը: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու համար պետք է դիմակը մատչելի դարձնել այն այցելուներին, ովքեր ժամանում են առանց դրա:
  - ❑ Իրականացվում են հաճախորդների ախտանշանների ստուգումներ՝ նախքան նրանց կթույլատրվի հաստատություն մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին գտնվում է մեկուսացման կամ կարանտինի հրամանների ներքո: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշաններով](#), որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
    - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
    - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
      - Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել տարածք, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine):
      - Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել [ph.lacounty.gov/covidisolation](http://ph.lacounty.gov/covidisolation):
  - ❑ Կիրառվում են առանց հպման վճարման և մուտքի համակարգեր, և եթե դրանք կիրառելի չեն, ապա համակարգերը օրական առնվազն մեկ անգամ ախտահանվում են: Նկարագրեք.
- 
- ❑ Օրվա ընթացքում մանրակրկիտ մաքրման աշխատանքներ իրականացրեք մարզասրահի կամ ֆիթնեսի հաստատության շինության մարդաշատ տարածքներում, որոնցից օգտվում են աշխատակիցները, ինչպիսիք են՝ ընդմիջման սենյակները, էլք ու մուտքի տարածքները, ներառյալ՝ աստիճանավանդակները, սանդուղքները, շարժասանդուղքները, բազրիքները և վերելակների կոճակները:
  - ❑ Ախտահանեք հաճախակի օգտագործվող մակերեսները, ներառյալ՝ անձնական օգտագործման մարզական մեքենաները և սարքավորումները, դռների բռնակները և ձեռքերը լվանալու տարածքները:
  - ❑ Հաճախորդներից պահանջեք տրամադրվող ախտահանող անձեռոցիկներով մաքրել անհատական օգտագործման մարզական սարքավորումները, գորգերը և մեքենաները՝ օգտագործումից առաջ և հետո: Ֆիթնես հաստատության ամբողջ տարածքում տեղադրեք առանց հպման բացվող աղբամաններ օգտագործված անձեռոցիկները դնելու համար:
    - Եթե անձը ի վիճակի չէ կամ չի ցանկանում սրբել/ախտահանել սարքավորումները վարժանքներից հետո, տրամադրեք «պատրաստ է մաքրման համար» պիտակներ, որոնք անձը կտեղադրի սարքավորումների վրա օգտագործելուց հետո, որպեսզի անձնակազմը ախտահանի սարքավորումները հաջորդ օգտագործումից առաջ:



- ❑ Համոզված եղեք, որ բոլոր աշխատողները վերապատրաստվել են օգտագործման և անհրաժեշտության դեպքում ունենալու բոլոր նպատակներով մաքրող և ախտահանող միջոցների համար: Մաքրող նյութերն օգտագործելիս հետևեք Cal/OSHA-ի պահանջներին, անվտանգ օգտագործման, և պահանջվող անձնակազմի պաշտպանիչ միջոցների վերաբերյալ արտադրողի ցուցմունքներին:
- ❑ Աշխատողները պետք է բավարար օդափոխություն ունենան (օդի հոսք) այն տարածքներում, որտեղ կատարում են ախտահանման աշխատանքները:
- ❑ Սանիտարական հարմարությունները հասանելի են միայն աշխատողների օգտագործման համար: Ապահովեք, որ սանիտարական տարածքները միշտ գործեն և հագեցած լինեն անհրաժեշտ պարագաներով: Անհրաժեշտության դեպքում տրամադրեք լրացուցիչ օձառ, թղթե սրբիչներ և ձեռքերի ախտահանիչ միջոց: Հնարավորության դեպքում տեղադրեք ձեռքով չհպվելու սարքավորումներ, ներառյալ՝ շարժման սենսորով ջրի ծորակներ, օձառի և թղթե սրբիչների դիսպենսերներ, և ձեռքերի ախտահանիչ միջոցներ:
- ❑ Համոզվեք, որ աղբամանները պարբերաբար դատարկվում են:
- ❑ Հաճախորդներին հարկավոր է հիշեցնել, որպեսզի 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեն մաքրող և սպասարկող անձնակազմից: Աշխատողներից կանոնավոր կերպով տեղեկացեք, արդյոք այցելուները հետևում են այս արձանագրությանը: Ապահովեք, որ աշխատողները կարողանան կիսվել-հայտնել նման տեղեկությունը առանց վախենալու հաշվեհարդարից կամ վրեժխնդրությունից:
- ❑ Դիտարկեք հաճախորդների կողմից դուրս տարվող փոքր սարքավորումների կամ պարագաների (օր.՝ վարժանքի գոտիներ, պարաններ, գորգեր և այլն) դուրս գրման համակարգ: Վերադարձնելուց հետո մշակեք այս պարագաները ախտահանելու գործընթացը:
- ❑ Հաճախորդներին խրախուսեք բերել իրենց անձնական ջրի շշերը: Խրախուսեք հաճախորդներին բերել իրենց անձնական սրբիչներն ու գորգերը, և նախատեսեք դադարեցնել հաստատության կողմից տրամադրվող սրբիչների և անձնական հիգիենայի պարագաների տրամադրումը:
- ❑ Բոլոր սրբիչների, կտորե անձեռոցիկների և լվացվելիս օգտագործված այլ պարագաների համար տրամադրեք փակ տարրա, որի մեջ հաճախորդները կարող են դնել օգտագործված սրբիչները կամ այլ պարագաները: Ապահովեք, որ այս պարագաները չեն կարող նորից օգտագործվել, քանի դեռ պատշաճ կերպով չեն լվացվել առևտրային լվացքատանը կամ հաստատության ներսում: Բոլոր մաքուր սպիտակեղենները պահեք մաքուր և ծածկված տեղում: Ապահովեք, որ այն աշխատողները, ովքեր կեղտոտ սպիտակեղենի կամ լվացքի հետ են գործ ունենում, ձեռնոցներ կրեն:
  - Աշխատակից նշանակեք, ով ըստ պահանջի սպիտակեղեն կամ այլ պարագաներ կտրամադրի՝ ինքնասպասարկման տարածք ունենալու փոխարեն:
- ❑ Հարմարությունները, ներառյալ՝ ամսագրերը, գրքերը, ջրի ինքնասպասարկման կայանները (բացառությամբ առանց հպվելու) և հաճախորդների համար նախատեսված այլ իրերը պետք է հանվեն բոլոր տարածքներից:
- ❑ Մաքրող նյութեր ընտրելիս գործատուները պետք է օգտագործեն ապրանքներ, որոնք Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) հաստատված ցուցակով արդյունավետ են COVID-19-ի դեմ և հետևեն ապրանքի պիտակի ցուցմունքներին: Օգտագործեք ախտահանիչներ, որոնց պիտակի վրա նշված է, որ դրանք արդյունավետ են վիրուսային պաթոգենների դեմ, նոսրացված կենցաղային քլորային (բլիչ) լուծույթներ (5 ճաշի գդալ՝ 1 գալոն ջրին) կամ առնվազն 60% սպիրտային հիմքով լուծույթներ, որոնք համապատասխան են տվյալ մակերեսի համար: Աշխատողներին վերապատրաստեք արտադրողի ցուցմունքների և Cal/OSHA պահանջների անվտանգ օգտագործման համար: Աշխատողները, ովքեր օգտագործում են մաքրող և ախտահանող նյութեր, պետք է կրեն ձեռնոցներ և այլ պաշտպանիչ հանդերձանք, ինչպես պահանջում են ապրանքի պիտակի ցուցմունքները: Կիրառեք Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչության կողմից առաջարկվող աստմայի

առումով անվտանգ մաքրման մեթոդները:

- Բացօթյա մարզասրահի/ֆիթնես հաստատության տարածքում հանրությանը տրամադրված են ձեռքի ախտահանիչ միջոց, անձեռոցիկներ և աղբամաններ: Ցանկալի է բացօթյա տարածքում տեղադրել ձեռքերը լվանալու առնվազն մեկ կայան, որից կարող են օգտվել աշխատակիցները և հաճախորդները:
- Լրացուցիչ (ընտրովի) - Նկարագրեք այլ միջոցառումներ (օր.՝ միայն տարեցների սպասարկելու ժամեր սահմանելը):

**D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Սույն Արձանագրության կամ հաստատության թողարկած Լոս Անջելեսի Շրջանի COVID-19 Անվտանգության Համապատասխանության Վկայագրի կրկնօրինակը պետք է փակցված լինի հաստատության բոլոր հանրային մուտքերում: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի անվտանգության համապատասխանության ինքնավկայագրման ծրագիրն ավարտելու համար այցելեք <http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm>: Հաստատությունները, տեղում՝ հաստատությունում, պետք է պահեն Արձանագրությունների պատճենը վերանայման համար՝ ըստ պահանջի:
- Նշաններ փակցնել մուտքի մոտ և լավ տեսանելի վայրերում, որտեղ հաճախորդները շարք են կանգնում, որոնք կտեղեկացնեն աշխատակիցներին և հաճախորդներին տարողության սահմանափակումների, սոցիալական հեռավորություն պահպանելու պահանջների մասին, և որ դիմակները պահանջվում են ամբողջ ընթացքում, բացառությամբ լողավազանում եղած ժամանակ: Նշաններն ու ցուցանակները պետք է նաև զգուշացնեն հաճախորդներին, որ չճանրաբեռնեն իրենց, երբ դիմակ կրելով մարզվում են: Տե՛ս [Շրջանի DPH COVID-19-ի ուղեցույցի կայքէջը](#) լրացուցիչ ռեսուրսների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար:
- Հաստատության առցանց հարթակները (վեբկայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) տալիս են հստակ տեղեկատվություն ժամերի վերաբերյալ, դիմակների կիրառման անհրաժեշտության, բացօթյա գործունեության, սահմանափակ տարողության, նախնական ամրագրման, կանխավճարի և այլ համապատասխան հարցերի վերաբերյալ:

**E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Հաճախորդների համար խիստ կարևոր նշանակություն ունեցող ծառայություններին առաջնահերթություն է տրված:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են առցանց:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժունակության սահմանափակումներ և/կամ բարձր վտանգի տակ գտնվող հաճախորդների համար հանրային վայրերում ապահովվի ծառայությունների հասանելիությունը:
  - o Նախատեսեք բարձր ռիսկային կամ բժշկական տեսանկյունից խոցելի բնակչության համար հատուկ ժամերի կիրառումը, ներառյալ՝ տարեցների մուտքը միայն ամրագրումով:

**Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված վերևում, պետք է նշվեն առանձին էջի վրա, որն էլ պետք է կցվի այս փաստաթղթին:**



Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցերի, կամ մեկնաբանությունների դեպքում,  
դուք կարող եք դիմել հետևյալ անձին.

Բիզնեսի կոնտակտային  
անձի անունը.

---

Հեռախոսահամարը.

---

Վերջին վերանայման  
ամսաթիվը.

---